ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2024 թվականի № --Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի №451Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 51-րդ կետը, և հաշվի առնելով «ԱՐՆԱՎԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 11-ի №41 և ի լրումն ներկայացված դեկտեմբերի 12-ի №43 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 5-ի «ԱՐՆԱՎԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հեղնաջուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №451Ա որոշման՝

1) 1-ին կետում «Գառնառիճ համայնքում» բառերը փոխարինել «Ամասիա համայնքի վարչական տարածքում (գյուղ Գառնառիճ)» բառերով,

2) 2-րդ կետով հաստատված հավելվածի՝

ա. 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2024 թվականի ապրիլի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2024 թվականի հունվարի 11-ը» բառերով,

բ. 5-րդ կետում «Արփի համայնքի վարչական տարածքն է» բառերը փոխարինել «Ամասիա համայնքի վարչական տարածքն է (գյուղ Գառնառիճ)» բառերով:

գ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 1718 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով)՝

1) Հիդրոտուրբին №1՝ G 8.024/16 g, 1296 կՎտ, 2009թ.,
2) Գեներատոր №1՝ SE 500L6, 1230 Կվտ, 2009թ.,
3) Հիդրոտուրբին N2՝ ցինկ հիդրո՝ G 5.015/10 g R 514 կՎտ, 2022թ,
4) Գեներատոր N2՝ 1FC2455-6LB40, 489 կՎտ, 2004թ.:»:

2. «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2023 թվականի նոյեմբերի 14-ի №G8152 գրությամբ ներկայացված EA23/00909 բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 11-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2024թ.